Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1967, 498 էջ

Հայ ժողովրդի պատմական զարգացումը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև XX դարը, ընթացել է արտակարգ ծանր և բարդ պայմաններում։ Օտար զավթիչների միմյանց հաջորդած արշավանքները վիթխարի նյութական կորուստ պատճառեցին երկրին, մեծ հարված հասցրին նրա արտադրողական ուժերին, խոչընդոտեցին հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումը։ Պատմության ընթացքում այսպիսի ծանր ժամանակներ առավել կամ նվազ չափով ապրել են աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդները։ Բայց նրանց ճակատագիրը հայերի պես ողբերգական չի եղել։ Ազգային պետականության կորուստը, այն էլ շատ վաղ անցյալում, ծանր հետևանքներ ունեցավ սակավաթիվ հայ ժողովրդի համար։ Ազգային պետականությունը իր սոցիալ-քաղաքական տարբեր հատկանիշներով հանդերձ ունեցել է մի չափազանց կարևոր պատմական դեր. այն ապահովել է տվյալ երկրի տերիտորիալ ամբողջականությունը, ապահովել է ժողովրդի հավաքական գոյությունը միասնական տերիտորիայում։ Սա ամեն մի ժողովրդի նորմալ զարգացման ամենատարրական պայմանն է, որից, մասնավոր բացառությամբ, զուրկ է եղել հայ ժողովուրդը։ Պետականության բացակայության և ժողովրդի կյանքի անապահով պայմանների հետևանքով ծայր է առել զանգվածային արտագնացությունը, որը դարձել է հայ ժողովրդի պատմության մշտական ուղեկիցը։

Հեռանալով հայրենի երկրից, հայ գաղթականները օտար միջավայրում պահպանեցին ազգային սովորությունները, մշակույթը, լեզուն։ Նրանք մշտական կապեր էին պահպանում հայրենիքի հետ, որը նրանց նոր ուժ էր հաղորդում ազգային գոյությունը պահպանելու համար։

Գաղթօջախների առաջացմամբ հայերի պատմությունը դադարեց միայն Հայաստանի պատմություն լինելուց, այն դարձավ համայն հայ ժողովրդի պատմություն՝ իր մեջ ընդգրկելով նաև գաղութահայության պատմությունը, որովհետև գաղութահայությունը, անկախ այն բանից, թե ինչպիսի տիրապետող սոցիալական-քաղաքական ու ազգային միջավայրում է ապրել, էթնիկական տեսակետից, իր ազգային նկարագրով, մտածելակերպով, հոգեբանությամբ, մշակույթով և մյուս բոլոր հատկանիշներով միշտ էլ եղել է և մնում է հայ ժողովրդի բաղկացուցիչ մասը։ Ինչպես չի կարող լինել գաղութահայության պատմություն առանց մայր հայրենիքի՝ Հայաստանի պատմության, այնպես էլ լիակատար չի կարող լինել Հայաստանի պատմությունը առանց գաղութահայության պատմության։

Սա հայտնագործություն չէ, այլ մի չափազանց պարզ ճշմարտություն, որի իմաստը նախ և առաջ կայանում է նրանում, որ որևէ ժողովրդի պատմությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է հաշվի առնել նրա պատմական զարգացման ինչպես ընդհանուր օրինաչափությունները, այնպես էլ օրինաչափության ուժ ստացած պատմական առանձնահատկությունները։

Ցավոք, երբեմն այնպես է լինում, որ նույնիսկ ճշմարտությունները հասկանալու և գնահատելու համար տասնամյակներ են պահանջվում։ Այդպես պատահեց նաև գաղութահայության պատմության հետ, որի գիտական ուսումնասիրությանը ձեռնամուխ լինելու անհրաժեշտությունը մեզ մոտ զգացվեց մեծ հապաղումով։

Բարեբախտաբար, այդ շրջանը արդեն վաղուց անցել է, և վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում Հայաստանի, Սովետական Միության և արտասահմանյան շատ հայագիտական կենտրոններ ու առանձին հետազոտողներ բավական մեծ գիտական գործունեություն են ծավալել գաղութահայության պատմության ուսումնասիրության ուղղությամբ։ Այս ասպարեզում կատարված աշխատանքի ծավալն այժմ այնպիսին է, որ արդեն իսկ այսօր հնարավորություն է ընձեռում պատմագիտական բնույթի որոշակի դատողություններ անել եղած գրականության գիտական մակարդակի, ընդգրկած պրոբլեմների և այլ հարցերի մասին, որ մեծ

բարեխղճությամբ վերջերս կատարել են պատմական գիտությունների թեկնածուներ Վ. Կ. Ոսկանյանը և Վ. Բ. Բարխուդարյանը[1]։

Զարմանալի գնահատելի է այն, որ այսօր Սիմեոն Լեհացու, Ա. Դավրիժեցու, Ղ. Ալիշանի, Ա. Ալպոյաջյանի պատմական երկերը միակը չեն, որոնց միջոցով ներկայումս հնարավոր է գաղափար կազմել դաղութահայության և Ռուսաստանի պատմության մասին։ Հանդես են եկել նոր հեղինակներ, որոնք մարքսիստական մեթոդոլոգիայի հիման վրա ստեղծել են բարձրարժեք գիտական հետազոտություններ քննարկվող հարցի վերաբերյալ։

Դաղութահայության պատմության ուսումնասիրությունը ներկայումս թևակոխել է մի նոր շրջան. այժմ այն դարձել է համաժողովրդական ուշադրության առարկա, և այդ պատճառով էլ պատահական չէ, որ հետազոտություններն այժմ տարվում են հարցերի ավելի լայն և խորը ընդգրկմամբ և, որն ամենակարևորն է, պլանաչափ հետևողականությամբ։

Դրա վառ վկայությունն է պատմական գիտությունների թեկնածու Վ. Բ. Բարխուդարյանի՝ վերջերս լույս տեսած «Նոր Նախիջևանի հայկական դաղութի պատմությունն» ստվարածավալ աշխատությունը, որի վերլուծության մի փոքր կատարելը ներկա դրախոսության հիմնական նպատակն է։

Աշխատությունը բաղկացած է ներածությունից և ութ գլուխներից, որոնց հետևում են հեղինակի ընդհանուր եզրակացությունները. ապա կցված են մի շարք պատմական փաստաթղթեր, ինչպես նաև օգտագործված աղբյուրների ու գրականության, անձնանունների և տեղանունների ցանկեր։

Ներածությունը նվիրված է լուսաբանվող թեմայի նշանակությանը և պատմագրությանը։ Նոր Նախիջևանի հայկական դաղութի պատմությանը ուղղակիորեն թե անուղղակիորեն առնչվող, տպադիր թե անտիպ նյութերի՝ արխիվային բազմաթիվ փաստաթղթերի ու գրականության մանրակրկիտ թվարկումը, օբյեկտիվ վերլուծությունն ու արժեքավորումը ոչ միայն վկայում են քննարկվող առարկայի մասին հեղինակի ունեցած լայն պատկերացումների և հիմնավոր դիտելիքների մասին, այլև ցույց են տալիս նրա խորին հարգանքը իր նախորդ հեղինակների նկատմամբ։

Հայկ. ՍՍՀ պետական պատմական արխիվում, Մատենադարանում, Ռոստովի, Մոսկվայի, Լենինդրադի տարբեր արխիվներում կատարած բազմամյա հետազոտությունների շնորհիվ հեղինակին հաջողվել է հայտնաբերել բազմաթիվ նոր, արժեքավոր նյութեր, որոնք հրապարակում եղած ոչ-այնքան հարուստ նյութերի հետ միասին Վ. Բարխուդարյանին հնարավորություն են տվել գրելու ռուսահայ խոշորագույն դաղութի՝ Նոր Նախիջևանի դիտական պատմությունը՝ սկսած նրա հիմնադրումից (1779 թ.) մինչև XIX դարի 60-ական թվականների սկիզբը։

Ի նկատի ունենալով Նոր Նախիջևանի խաղացած հույժ կարևոր դերը ինչպես հարավային Ռուսաստանի տնտեսական և մշակութային կյանքում, այնպես էլ զուտ հայկական իրականության մեջ, նրա գիտական պատմության շարադրումը վաղուց ի վեր դարձել էր օրակարգի հարց։ Այդ անհրաժեշտությունը առավել ևս ընդգծվում էր նրանով, որ հրապարակի վրա չկային լուսաբանվող հարցի մասին քիչ թե շատ ամբողջական պատկերացում տվող այլ աշխատություններ, եթե հաշվի չառնենք Ե. Շահազիզի երկու հայտնի գրքերը, որոնք, սակայն, գրված են միանգամայն այլ տեսանկյունից և այլ նպատակով։

Աշխատության բովանդակությունը, որ, ինչպես ասացի, շարադրված է ութ գլուխներում, բազմակողմանի պատկերացում է տալիս դաղութի հիմնադրման, նրա ներքին կյանքի, բնակչության հիմնական զբաղմունքների, սոցիալական և հասարակական-քաղաքական պայքարի, հայ-ռուսական հարաբերություններում Նոր Նախիջևանի ունեցած պատմական նշանակության, դաղթօջախի ազգային մշակույթի և բազմաթիվ այլ հարակից հարցերի մասին։

Հենվելով պատմական փաստերի վրա, առաջին գլխում հեղինակը ցույց է տալիս դաղութի հիմնադրման շարժառիթները, որոնք բխում էին Ղրիմի և Ռուսաստանի հարավի նկատմամբ ցարիզմի վարած չափազանց հաշվենկատ քաղաքականությունից։ Ցարական կառավարությունը վաղուց ի վեր Ղրիմը Ռուսաստանին միացնելու պլաններ էր մշակում։ Այդ նպատակին հասնելու համար կառավարությունը մտադիր էր բազմաթիվ խոստումների դնով Ղրիմի քրիստոնյա (հայ և հույն) բնակչությանը վերաբնակեցնել Նովորոսիայի անմարդաբնակ տափաստաններում։ Ըստ կառավարության հաշիվների, այդ միջոցառումը պետք է լուծեր երկու հարց. նախ՝ քրիստոնյա

---

1 Վ. Կ. Ոսկանյան, Վ. Բ. Բարխուդարյան, Հայ դաղթավայրերը սովետահայ պատմության մեջ, «Լրաբեր հասարակական դիտություններին», 1968, № 4։

բնակչության տեղափոխումով ծանր հարված հասցնել Ղրիմի խանության տնտեսությանը և դրանով իսկ հեշտացնել թերակղզու միակցումը Ռուսաստանին և, երկրորդ, արհեստների և առևտրի մեջ հմուտ հայերին և հույներին վերաբնակեցնելով Նովորոսիայում՝ Ռուսաստանի հարավի այդ երկրամասում ունենալ հավատարիմ բնակչություն և նրանց միջոցով շենացնել Նովորոսիայի ամայի տափաստանները։ Ցույց տալու համար, թե ինչպիսի կարևորություն էր տալիս Եկատերինա 2-րդի կառավարությունը ղրիմահայերի և հույների վերաբնակեցմանը, աշխատության հեղինակը վկայակոչում է Ֆելդմարշալ Ռումյանցևի խոսքերը. «Քրիստոնյաների դուրս բերելը — նշում է Ֆելդմարշալը,— հավասարազոր է մի նշանավոր նահանգի նվաճմանը» (էջ 39)։

Համառ պայքարից հետո Ռուսաստանին հաջողվեց հասնել իր նպատակին, որի հետևանքով 1779 թ. ձմռանը հիմնադրվեց Նոր Նախիջևանի հայկական գաղութը իր հինգ գյուղերով հանդերձ (Զալթր, Թոփտի, Մեծ-Սալա, Սուլթան-Սալա և Նեսվիտա)։

Մի շարք փաստերի միջոցով Վ. Բարխուդարյանը այս հարցի առթիվ կարևոր ճշտումներ է կատարում. օրինակ նա գտնում է, որ հայերը Դոնի գետաբերան հասան ոչ թե 1779 թ. դեկտեմբերին, ինչպես նշում է Գ. Պատկանյանը, այլ 1880 թ. հունվարին։ Այնուհետև, անդրադառնալով գաղթականության կազմակերպման և Նոր Նախիջևանի հիմնադրման գործում Հովսեփ Արղությանին վերագրվող կարևոր դերին, հեղինակը փաստերով ցույց է տալիս, որ ավելի ճիշտ կլիներ այդպիսի դեր վերագրել ոչ թե Նրան, այլ Հովհաննես Լազարյանին։

Նովորոսիայում վերաբնակեցնելուց հետո ցարական կառավարությունը հիմնականում կատարեց իր խոստումները և որոշակի արտոնություններ ընձեռեց հայ և հույն վերաբնակներին։ Նրանց հանձնվեցին զգալի հողային տարածություններ, տասը տարով նրանք ազատվեցին բոլոր տեսակի հարկերից և պետական ծառայություններից, այդ թվում նաև զինվորագրությունից, թույլատրվեց կառուցել եկեղեցիներ և ազատորեն կատարել ազգային ծիսակատարությունները, ինչպես նաև եկեղեցին դնել էջմիածնի կաթողիկոսական Աթոռի դերիշխանության տակ։ Արտոնությունների մեջ հատկապես կարևոր նշանակություն ուներ ինքնուրույն մագիստրատի հիմնումը և ազգային իրավունքի համաձայն դատական գործեր վարելը։ Բացի այդ, նրանց տրվեց մի շարք տնտեսական առանձնաշնորհումներ (Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս ազատ առևտուր անել, առևտրական նավեր կառուցել, ֆաբրիկաներ և մրգատու այգիներ հիմնել և այլն)։ Այսուհանդերձ, ինչպես ցույց է տալիս աշխատության հեղինակը, պաշտոնական արտոնագրում արտացոլվեցին ցարական կառավարության ոչ բոլոր խոստումները։ Օրինակ, նախապես որոշվել էր, որ հայերը 30 տարով պետք է ազատվեին պետական պարտավորություններից և հարկերից, այնինչ իրականում նրանք ազատվեցին միայն 10 տարով և, բացի այդ, պարտավոր էին իրենց սահմաններով անցնող զորամասերին ապահովել օթևանով և պարենով, որը նույնպես սկզբում չէր նախատեսված։ Կառավարությունը չկատարեց նաև մի այլ խոստում, այն է՝ օգնել առավել ունևոր վերաբնակներին դանազան ձեռնարկություններ հիմնելու։

Անդրադառնալով բնակչության հարցին (երկրորդ գլուխ), հեղինակը չափազանց հետաքրքիր տվյալներ է բերում Նոր Նախիջևանի և հարևան քաղաքների բնակչության քանակի վերաբերյալ. ըստ այդ տվյալների, 1801 թ. Նոր Նախիջևանում բնակվում էր 8704 մարդ, այդ նույն ժամանակ Ռոստովի բնակչությունը 4000-ի էլ չէր հասնում, իսկ Մարիուպոլում և Տագանրոգում համապատասխանաբար բնակվում էին 2436 և 5040 մարդ։ Հետագայում, երկրամասի բնակչությունն ավելացնելու ուղղությամբ ցարական կառավարության վարած քաղաքականության հետևանքով, Նոր Նախիջևանի հայկական գաղթօջախի բնակչության աճը թեև օբյեկտիվորեն աճում էր, բայց բացարձակ թվերով չափազանց ետ էր մնում հարևան ռուսական քաղաքների բնակչության աճից։

Հետևյալ երեք գլուխներում (երրորդ, չորրորդ և հինգերորդ) Վ. Բարխուդարյանը պատմական հարուստ փաստերի վերլուծությամբ, լուսաբանում է գաղթօջախի բնակչության զբաղմունքների հարցը։ Այստեղ նա առանձնացնում և քննարկում է զբաղմունքի երեք հիմնական ձևեր՝ երկրագործություն և անասնապահություն, արհեստագործություն և արդյունաբերություն, առևտուր։

Մինչև այս գլուխների կոնկրետ քննարկման անցնելը, հարկ է նշել, որ հեղինակը այստեղ հանդես է բերել տնտեսական բարդ հարցերի վերլուծման և գրանցում ճիշտ կողմնորոշվելու ակնհայտ հմտություն։

Ահա մի քանի բնորոշ օրինակ։ Հայ երկրագործների մշակած ցորենի և դարու բերքատվության մասին մոտավոր գաղափար տալու համար նա նախ բերում է երկու տարվա տվյալներ։ Ըստ այդ տվյալների, 1820 թ. հայ գյուղացիները ցանել են 3975 չետվերտ ցորեն և 383 չետ. գարի, 1821 թ. համապատասխանաբար ցանվել է 3903 և 440 չետ.։ Հետո հեղինակը նշում է, որ հետագայում, հատկապես 30—40-ական թվականներին արտաքին շուկայում ցորենի տեսա-

կարար կշիռը բարձրանալու և մեծ չափերով այն այլ երկրներ արտահանելու շնորհիվ մեծանում է հացահատիկի պահանջը, որի հետևանքով նկատելիորեն ընդարձակվում են ցանքատարածությունները։ Ապա հեղինակը համեմատական տվյալների միջոցով դնահատում է բերքատվության բարձրացման առպարեզում հայ երկրագործների ձեռք բերած արդյունքները։ 1858 թ. հայ հողագործները (թվով 6366 հոգի) 11 հազար 276 չետ. գարնանացան ցորենից ստացել են 90 հազ. չետ. բերք։ Բերքատվությունը, այսինքն՝ ցանված և ստացած ցորենի հարաբերությունը հասել է ութի։ Այդ նույն ժամանակ հարևան Մարիուպոլի հույն գյուղացիների մոտ այն կազմել է $4^2/_3$, Տագանրոգի պետական գյուղացիների մոտ՝ 6, կալվածատիրական գյուղացիների մոտ՝ 4։

Չբավարարվելով այս, արդեն իսկ բավական համոզիչ թվերով, հեղինակը ավելի խորն է գնում. այլ թվական տվյալների միջոցով նա փորձում է պարզել ստացված հացահատիկի՝ բնակչության մեկ շնչին ընկնող բաժինը թվարկված արտադրողների մոտ։ Ստացվում է, որ Տագանրոգի օկրուգի կալվածատիրական գյուղացիները արտադրել են 2 չետվերտից մի փոքր ավելի, պետական գյուղացիները՝ շուրջ $5^1/_2$ չետ., Մարիուպոլի հույները՝ $4^2/_3$ չետ., իսկ հայ գյուղացիները մյուս օկրուգների երկրագործների համեմատությամբ արտադրել են 3—4 անգամ ավելի հացահատիկ։

Կամ. մի այլ տեղ հեղինակը աշխատում է պարզել Նոր Նախիջևանում ձկնորսության ընդհանուր ծավալը և ընդհանրապես ձկնարդյունաբերության պատկերը XIX դարի առաջին կեսին. դրա համար նա կազմում է մի աղյուսակ, որտեղ ըստ մի քանի տարիների տվյալներ է բերում յուրաքանչյուր ձկնատեսակի (թառափ, դուտիի, ստերլյադի, լոքո, կարմրաձուկ, տառեխ, չեխոնի, հարինգ, շիդաձուկ և այլն) որսի մասին։ Բերված աղյուսակը արդեն ինքնըստինքյան վկայում է ձկնորսության մեծ ծավալը՝ 500 տոննայից ավելի՝ միայն 1810 թվականին, իսկ 1858 թ. միայն թառափի ընտանիքին պատկանող բարձրորակ ձկան որսը հասնում էր 72 տոննայի։ Աղյուսակից միևնույն ժամանակ նա հետևցնում է, որ 1810 թ. 4000 կգ-ի (250 փութ) դիմաց 1858 թ. կարմրաձկան որսը հասել է շուրջ 72 հազ. կգ-ի (4350 փութ), կամ մոտ 50 տարվա ընթացքում ավելացել է տասնյոթ անգամ։

Սակայն հետամուտ լինելով ձկան վաճառքից ստացված գումարի չափերին, հեղինակը նկատում է մի տարօրինակ երևույթ. ձկան որսի ավելանալուն համեմատ ոչ միայն չէր աճում նաև նրա վաճառքից ստացված գումարը, այլև բացահայտ կերպով նվազում էր։ Օրինակ. 1816—1858 թթ. այդ գումարը նվազել էր 750 ռուբլով։ Խորամուխ լինելով փաստերի մեջ, հեղինակը այս հանելուկը բացատրում է հետևյալ կերպ. հիմնական աճ տվող բարձրորակ ձկնատեսակի վաճառքից ստացվող գումարը պարզապես չի արտահայտվել փաստաթղթերում. այդ պատճառով էլ հեղինակի կազմած աղյուսակում արտացոլվել է մասամբ թարմ, սակայն հիմնականում աղ դրած ձկան վաճառքից ստացվող գումարը միայն։

Հեղինակը նման մանրակրկիտ վերլուծություններ կատարում է տնտեսության և արտադրության գրեթե յուրաքանչյուր ճյուղ քննարկելու ժամանակ։ Եվ ի պատիվ նրա, պետք է ասել, որ այդ մանրամասնությունները ոչ միայն չեն ձգձգել, կամ ծանրաբեռնել աշխատությունը, այլ ընդհակառակը նպաստել են այն բանին, որպեսզի դաղթօջախի տնտեսության պատկերը տրվի առավելագույն լիակատարությամբ։

Ինչպես վերևում ասվեց, այս երեք գլուխներում հեղինակը քննարկում է Նորնախիջևանցիների հիմնական զբաղմունքները. բնակչության մեծ մասը ներգրավված էր գյուղատնտեսության մեջ, որի առաջատար ճյուղերն էին հացահատիկային կուլտուրաների մշակությունը, այգեգործությունն ու պտղաբուծությունը, անասնապահությունը և ձկան որսը։ Ստացված հացահատիկի անհրաժեշտ մասը օգտագործվում էր գաղութի բնակչության կարիքները բավարարելու համար, իսկ մեծ մասը արտահանվում էր օտարերկրյա շուկա, ընդ որում, ինչպես ընդգծում է հեղինակը, սեծովյան նավահանգիստներից հացահատիկ արտահանելու ժամանակ նախապատվություն էր տրվում Նոր Նախիջևանում հայ գյուղացիների արտադրած բարձրորակ հացահատիկին։

Անդրադառնալով այգեգործությանը, Վ. Բարխուդարյանը կանգ է առնում հատկապես խաղողի և թթենու մշակման վրա և այն կարծիքն է հայտնում, որ այգեգործության այս ճյուղերը Նովոռոսիայում առաջին անգամ տարածեցին նախիջևանցի հայերը։ Այս ճյուղերի գծով նրանք հասել էին չափազանց բարձր արդյունավետության։ Ակառնապահության ճյուղերից հայերը նախապատվություն էին տվել հատկապես ոչխարաբուծությանը, որից ստացվող արտադրանքը (կաշին, բուրդը, ճարպը) նշանակալից եկամուտներ էր բերում բնակչությանը։

Գաղթօջախի տնտեսության մեջ պատկառելի տեղ էին գրավում արհեստները և առևտուրը։

Դեռևս 1793 թ. Նոր Նախիջևանում բնակվող 7567 մարդուց 2451-ը, կամ բնակչության 23 տոկոսը զբաղվում էր արհեստագործությամբ։ Սակայն հետագայում, արդյունաբերության աս-

տիճանական զարգացման և այլ վայրերից արդյունաբերական արտադրանքի ներմուծման հետևանքով, գնալով նվազում է արհեստագործության տեսակարար կշիռը։ Հիմնվելով արխիվային նյութերի վրա, աշխատության հեղինակը նշում է, որ Նոր Նախիջևանում XIX դարի սկզբներին եղել են ավելի քան 40 տեսակի արհեստներ։ Զարգացած անասնապահությունը լայն հնարավորություններ էր տալիս հատկապես կաշեգործության (սափյանի արտադրության, կոշկակարության, մուճակագործության, մուշտակագործության, բամբակագործության և այլն) ծավալման համար։ Դրա հետ մեկտեղ հայերը լայնորեն զբաղվում էին նաև արհեստի հայկական ավանդական ձևերով՝ ոսկերչությամբ, արծաթագործությամբ, ասեղնագործությամբ և այլն։

Աշխատության մեջ մեծ տեղ է հատկացված հայերի առևտրական գործունեության վերլուծությանը։ Հեղինակը այս հարցի կապակցությամբ իրավացիորեն գտնում է, որ «առևտրի ծավալման խնդրում ղրիմահայերի ձգտումը լիովին համընկնում էր Նովորոսիայում պետության վարած քաղաքականությանը» (էջ 258)։ Իսկ այդ քաղաքականության նպատակը, ինչպես մատնանշում է նա, նոր երկրամասի տնտեսական կյանքը առևտրի և այլ միջոցներով աշխուժացնելն էր, որը օգտավետ էր նաև հայերին։ Եվ պետությունը ամեն կերպ նպաստում ու խթանում էր առևտրի ծավալմանը։ Վ. Բարխուդարյանը ցույց է տալիս, որ այդ նպաստավոր պայմաններից օգտվելով, հայերը շատ կարճ ժամանակամիջոցում իրոք որ ծաղկման են հասցնում առևտուրը։ «Ռոստովի տոնավաճառներին հիմնական ապրանք մատակարարողները և նրանց աշխուժություն տվողները գերազանցապես Նախիջևանի հայ վաճառականներն էին»,— նշում է նա (էջ 262)։ Հայերի առևտրի հիմնական ապրանքներն էին ցորենը և կտավատը, օղին և մասամբ գինին, ձուկը, անասունները, յուղը և ճարպը, կաշին և զանազան մորթիները, անտրացիտը, ծխախոտը, կտորեղենը, արդուզարդի առարկաները, նպարեղենը և այլն։

Զափազանց ուշագրավ են աշխատության այն էջերը, որտեղ քննարկվում է հայ-ռուսական հարաբերություններում Նոր Նախիջևանի խաղացած դերը։ Ընդհանուր առմամբ բնորոշելով ռուսահայ գաղթօջախների այդ դերը, Վ. Բարխուդարյանը գրում է. «Նրանք (ռուսահայ գաղթօջախները —Մ. Հ.) հայ համայնքի համեստ շրջանակներում լծորդել են երկու ժողովուրդների՝ հայ և ռուս ժողովուրդների փոխհարաբերություններն ու կապերը, աշխուժորեն արձագանքել ու մասնակցել են ռուսական հասարակական կյանքի բոլոր գլխավոր իրադարձություններին։ Մյուս կողմից, ռուսահայ զանգվածները կտրված ու անտարբեր չեն եղել իրենց ժողովրդի բախտի, նրա պատմական ճակատագրի հանդեպ։ Այլ խոսքով, հայկական զանգվածները դրսևորել են ռուսական տիրապետության ներքո ապրելու ու նրա մասնիկը կազմելու, սակայն միաժամանակ հայկական գաղթօջախ լինելու իրենց ուրույն վիճակը» (էջ 311)։ Ապա կոնկրետ պատմական օրինակներով նա մասնավորեցնում է իր խոսքը Նոր Նախիջևանի գաղթօջախի վրա։ Այդ օրինակներից մենք իմանում ենք, որ Նորնախիջևանցիները մեծ գործունեություն են ծավալել 1812 թ. հայրենական և 1853—1856 թթ. Ղրիմի պատերազմների ժամանակ ռուսական զորքին պարենամթերքով, հագուստով, դրամով և այլ անհրաժեշտ միջոցներով օգնելու, ռազմական գործողություններին մասնակցելու համար։ Նոր Նախիջևանի այդ հայրենասիրական գործունեությունը բազմիցս նշվել է ռուսական արքունիքի պաշտոնական փաստաթղթերում և անգամ կայսեր հատուկ շնորհակալագրում։

Գաղթօջախի բնակչությունը հատկապես ջերմորեն ընդունեց պարսկական տիրապետությունից Արևելյան Հայաստանի ազատագրման լուրը։ Աշխատության հեղինակը այս առթիվ վկայակոչում է Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Խաչատուր Խոմաճովի 1827 թ. դեկտեմբերի 6-ի ուղերձը, որով նա Դոնի հայ հասարակության անունից դիմելով Նիրսես Աշտարակեցուն, ի միջի այլոց, գրում էր. «...և սիրտեռանդն գոհութեամբ ըղձակաթ համբույր մատուցել ի հեռուստ աստի... լերանցն Արարատայ զորս փրկեցեալ ի ներքուստ ձեռաց բարբարոսաց» (էջ 328)։

Մի շարք այլ փաստերի միջոցով գրքի հեղինակը բացահայտում է Նոր Նախիջևանի կապերը մյուս գաղթօջախներում (Մոլդավիա և Բեսարաբիա, Պետերբուրգ, Մոսկվա, Ակկերման, Կոստանդնուպոլիս, Հնդկաստան և այլն) բնակվող հայրենակիցների հետ։

Նոր Նախիջևանի հայկական գաղթօջախի զարգացումը ընթացել է ոչ առանց ներքին հակասությունների, հակամարտ խավերի միջև սուր պայքարի։ Զեռքի տակ ունենալով հարուստ փաստեր, Վ. Բարխուդարյանը կարողացել է ցույց տալ, որ նման հակասություններ ոչ միայն եղել են, այլև շատ հաճախ դրանք չափազանց սուր բախումների պատճառ են հանդիսացել։

Հատկապես ուժեղ է եղել հողային հարցի շուրջ մղված պայքարը։ Հողային հարցը գաղթօջախի բնակչության համար կենսական մեծ նշանակություն ունեցող հարց էր։ 1830-ական թթ. սկզբին քաղաքի վերնախավը, չբավարարվելով համայնական հողերից 5100 դեսյատին հող յուրացնելուց, աշխատում էր մերձակա հայ գյուղերին պատկանող հողերի մի մասն էլ իր ձեռքը

գցել։ Այս պայքարը փոփոխական հաջողությամբ տևեց ավելի քան մեկուկես տասնամյակ և վերջացավ գյուղացիների հաղթանակով։

Դաղության ներսում սուր պայքար էր գնում նաև այլ առիթներով։ Բուրժուա-կալվածատիրական վերնախավը օգտվելով իր տնտեսական և պաշտոնական ուժեղ դիրքից, շատ հաճախ դիմում էր չարաշահումների, կեղծիքների, օրինազանցության և ամեն տեսակ խարդախությունների՝ փորձելով այդ կեղտոտ միջոցներով սեփականացնել համայնքի ունեցվածքը։ Այդ տեսակետից հատկապես աչքի էր ընկնում երկար տարիներ քաղաքագլխի պաշտոնը զբաղեցրած մեծահարուստ Արտեմ Խալիբյանը։ Հեղինակը մանրամասն նկարագրել է համայնքի և Խալիբյանի ու նրա կողմնակիցների միջև մղված պայքարը։

Խոսելով գաղութում եղած նեհրհակությունների մասին, Վ. Բարխուդարյանը արժեքավոր դիտողություններ է անում Աբրամով—Արղության կամ Դերիջանյան—Արղության հայտնի խնդրի առիթով։

Թեև այս խնդիրը հայ պատմագրության մեջ բազմիցս շոշափվել է, բայց մինչև այժմ էլ բոլոշակի տարակարծություններ կային նրա շուրջը։ Այդ խնդիրը կայանում է հետևյալում. 1797 թ. հունիսին Նորնախիջևանցի Մանուկ Դերիջանյանը Պետերբուրգ մեկնելով, կայսրին է հանձնում արքեպիսկոպոս Հ. Արղությանի թույլ տված ապօրինությունների մասին բողոքագիր։ Արքեպիսկոպոսը մեղադրվում էր հայ եկեղեցուն պատկանող ունեցվածքը հափշտակելու, քաղաքների կառավարման կարգը կամայականորեն փոխելու, հասարակությունից ստացած 11 հազ. ռուբլին յուրացնելու, իշխան Պոտյոմկինի միջոցով իր ուզած մարդկանց պաշտոններ տալու և, վերջապես, անձամբ իրեն՝ Դերիջանյանին հալածելու և իր նկատմամբ տնտեսական ճնշում գործադրելու մեջ։

Դեռ իր ժամանակ Ե. Շահազիզը նկարագրել է այս խնդրի շուրջ ծավալված պայքարը և տվել իր գնահատականը։ 1928 թ. հենվելով սոսկ Ս. Շահազիզի նկարագրության վրա, ակադեմիկոս Ա. Կարինյանը միանգամայն այլ ձևով է գնահատում այդ խնդիրը և նույնիսկ հանդիմանում է Շահազիզին «աղաների» դեմ պայքարողներին «խառնակիչներ» անվանելու և անցյալի պատմական իրադարձությունները դրանով իսկ աղավաղված ձևով ներկայացնելու համար։

Վերջին տարիներին այդ խնդրին անդրադառնում է նաև գրականագետ Ս. Գ. Արեշյանը, որը ավելի հեռուն է գնում։ Շեշտը դնելով խնդրի միայն դասակարգային կողմի վրա, վերջինս փորձում է այն կապել ժամանակի դեմոկրատական շարժման հետ և այդ շարժմանն էլ լայն թափ է հաղորդում... մեր օրերից։ Դրանից հետո Արեշյանը գրում է. «Ըստ երևույթին ամենևին պատահական չէ, որ Դերիջանյանի և Աբրամովի պայքարը ժամանակի տեսակետից համընկնում էր այն պայքարի հետ, որ մղում էին Ռադիշչևը և իր կողմնակիցները»։

Վ. Բարխուդարյանը մեկ առ մեկ քննելով այս տարբեր տեսակետները և հենվելով արխիվային փաստերի սեփական հետազոտության վրա, եզրակացնում է, որ «Աբրամովն ու Դերիջանյանը իշխող դիրք ձեռք բերելու և նյութական միջոցների տեր դառնալու համար բանսարկության և զարտուղի այլ ճանապարհներով գործող նեղմիտ անձնավորություններ էին։ Նրանք ոչ միայն դեմոկրատական շարժման ղեկավարներ չէին (որպիսի շարժում գոյություն չուներ), այլև որևէ կապ ու դասակարգային աղերսակցություն չունեին և բնավ չէին արտահայտում աշխատավոր ներքնախավերի շահերն ու ձգտումները։ Նրանց՝ հայ հասարակական-քաղաքական կյանքում խոշոր հետք թողած Միքայել Նալբանդյանի նախորդներ դիտել, կամ Բաբրիել Պատկանյանին Նրանց գործի անմիջական շարունակող համարել, կնշանակեր սխալ պատկերացում ունենալ Նոր Նախիջևանի XVIII դարի վերջերի տնտեսական կյանքի զարգացման աստիճանի և սոցիալ-դասակարգային փոխհարաբերությունների մասին» (էջ 372)։ Մնում է միայն համաձայնել այս խնդրի վերաբերյալ Վ. Բարխուդարյանի դիտողություններին և եզրակացությանը, որոնք շափազանց հիմնավոր են և համոզիչ։

Աշխատության վերջին, ութերորդ գլխում հեղինակը քննարկում է գաղութի մշակութային հարցերը, մասնավորապես կանգ առնելով դպրոցական և տպագրական գործի կազմակերպման, ինչպես նաև ռուսական կենտրոնների հետ Նոր Նախիջևանի ունեցած մշակութային կապերի վրա։

Ավարտում ես գրքի ընթերցումը և զգում, որ քո առջև լայնորեն բացվեց անցյալի մշուշն վարագույրը, երևաց մի փոքրիկ հայ աշխարհ, ուր սրանից 100—150 տարի առաջ էլ հորդացել է կյանքը, աշխույժ ռիթմով խփել դաղթօջախի զարկերակը, ուր մարդիկ աշխատել են ժրաջան ու ընդվզել, թախծել ու երազել...

Հիրավի լավ գործ է կատարել Վ. Բարխուդարյանը։ Արտահայտվելով գիտական լեզվով, պետք է նշել, որ գրախոսվող աշխատությունը, իրոք, մի լավագույն ավանդ է հայ պատմագրության մեջ ընդհանրապես և գաղութահայության պատմության մասին հրապարակում եղած գրա-

կանության մեջ մասնավորապես։ Այս գիրքը ոչ միայն հարստացնում է ընթերցողի գիտելիքները և պատկերացումները Նոր Նախիջևանի հայկական գաղթավայրի պատմության մի պատկառելի ժամանակահատվածի մասին, այլև իր շատ կողմերով կարող է օրինակ ծառայել գաղութահայության պատմությունը ուսումնասիրելիս և լուսաբանելիս։

Հեղինակին կարելի է միայն կշտամբել այն բանի համար, որ իր գիտելիքներն ու հմտությունը առատորեն շռայլելով յոթ գլուխների վրա, նույն ձևով չի վարվել նաև վերջին, ութերորդ գլխի հետ։ Ճիշտ որ, ինչպե՞ս կարելի է մշակույթը սահմանափակել մի քանի դպրոցով ու տպարանով և նույնքան էլ մտավորականներով։ Էլ ո՞ւր մնացին ճարտարապետությունն ու գիր-գրականությունը, երաժշտությունն ու նկարչությունը, ժողովրդի կենցաղն ու սովորությունները և հար ու նման բաներ, որոնցով այքան հարուստ էր Նոր Նախիջևանի գաղթօջախը։ Եթե հեղինակը այդ բոլորը համեստորեն թողել է Փորքշեյանին[2], ապա մոռացել է, որ ինքը պատմաբան է, իսկ Փորքշեյանը տվյալ դեպքում՝ միայն ազգագրագետ։

Եվ, վերջապես, կշտամբանքի մի քանի խոսք էլ պետք է ուղղել սրբագրչին և մասամբ էլ երկու խմբագիրներին։ Գիրքը, որ գրված է ճոխ հայերենով, հետաքրքիր ոճով և կուռ նախադասություններով, պետք է, որ անպայման զերծ լիներ լեզվական թերություններից, որոնք թեև այնքան էլ շատ չեն, բայց ինչ-որ տպավորություն, այնուամենայնիվ, թողնում են (կետադրական նշաններ, անձնանունների և տեղանունների ուղղագրություն և այլն)։ Այն խոշոր և մեծարժեք աշխատանքում, որ կատարել է Վ. Բարխուդարյանը, նշված թերություններն, իհարկե, չնչին մանրուք են, բայց լավ կլիներ, որ այդ մանրուքն էլ չլիներ։

Կարծում եմ, որ այս աշխատությունը պետք է հեղինակին պարտավորեցնի մինչև վերջը հասցնել այն գործը, որի լավ սկիզբը արդեն դրվել է. պետք է ստեղծել Նոր Նախիջևանի գաղթօջախի լիակատար պատմությունը։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

---

2 Ե. Փորքշեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1965։